Հայտարարություն

<< ՀՀ Արագածոտնի մարզի Շղարշիկի Ա. Մինասյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ –ի տնօրինությունը հայտարարում է մրցույթ կերպարվեստ (8 դասաժամ), երգ-երաժշտություն (8 դասաժամ), ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի:

Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Ուսուցչի թափուր աշխատատեղերի համար մրցույթին մասնակցել ցանկացողները հանձնաժողով են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը.

1. **Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,**
2. **Բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ)**
3. **Անձը հաստատող փաստաթուղթ**
4. **<<Հանրության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում)**
5. **Ինքնակենսագրություն (Ձև 5)**
6. **Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ –ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ**
7. **ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ**
8. **Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում)**
9. **Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:**
   Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
   Փաստաթղթերն ընդունվում են մինչև սեպտեմբերի 5-ը ներառյալ, ամեն օր ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ , կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:
   Մրցույթը տեղի կունենա սեպտեմբերի 7-ին՝ ժամը 13:00-ին,Շղարշիկի Ա. Մինասյանի անվան միջնակարգ դպրոցում, հասցեն՝ ՀՀ Արագածոտնի մարզ գյուղ Շղարշիկ, 5 –րդ փողոց, շենք 9:
   Տեղեկությունների համար զանգահարել 098 86 41 56 հեռախոսահամարով: